Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2021 թվականի մարտի 2-ի N 8 - 3 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Դ. Ռ. Գալոյան
2 մարտի 2021 թ.

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԵՎ ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԴՐԱՆՑՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) «Ամբերդ» հետազոտական կենտրոնում (այսուհետ՝ Կենտրոն) հետազոտական թեմաների մշակման, հաստատման, դրանց իրականացման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման, կատարողների ներգրավմամբ հետազոտական խմբերի ձևավորման, դրանց ֆինանսական աջակցության տրամադրման, հետազոտական խմբերում ասպիրանտների և ուսանողների պարտադիր ներգրավման պայմանները:

2. Սույն կարգի ներդրման **նպատակն է.**

ա) Կենտրոնի ընթացիկ հետազոտությունների թեմաների ձևավորման, քննարկման, հաստատման կառուցակարգերի ձևավորումը,

բ) արտաքին և ներքին շահառուների համար գիտագործնական հետաքրքրություն ներկայացնող հետազոտական թեմաների հաստատման առաջնահերթության և Կենտրոնում իրականացվող հետազոտությունների կիրառականության ապահովումը,

գ) Կենտրոնի հետազոտական արդյունքներն ուսումնական գործընթացում ինտեգրումը,

դ) Կենտրոնի կողմից հետազոտական թեմաների կատարման նպատակով մրցույթների հայտարարման, հայտերի փորձաքննության, արդյունքների գնահատման և հետազոտական խմբերի ձևավորման թափանցիկ կառուցակարգերի ներդրումը,

ե) հետազոտական խմբերում Համալսարանի՝ ներառյալ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի պրոֆեսորադասախոսական կազմի (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող), ասպիրանտների և ուսանողների ներգրավման կառուցակարգերի ներդրումը,

(2-րդ կետի «ե» ենթակետը լրաց. 05.03.2024 N 7 - 3)

զ) իրականացվող հետազոտությունների հանրայնացման ընթացակարգերի ներդրումը:

3. **Կարգում օգտագործվող հիմնական հասկացությունները:** Սույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

ա) **Հետազոտական մասնագիտական բնագավառ:** Գիտության այն ոլորտներն են, որտեղ Կենտրոնն իրականացնում է ակադեմիական կամ կիրառական հետազոտություններ՝ կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ հիմնախնդիրների ձևակերպման և դրանց լուծման ուղիների առաջադրման նպատակով: Կենտրոնի մասնագիտացման հիմնական բնագավառներն են՝ մակրոտնտեսական կայունության, հարկաբյուջետային և դրամավարկային

քաղաքականության, արտաքին հատվածի, ֆինանսական շուկաների և ինստիտուտների, մրցունակության, շուկաների, մրցակցության, գների և գնաճի, հանրային քաղաքականության, գործարարության, վարչարարության, կրթական գործընթացի կազմակերպման և կրթական տեխնոլոգիաների հետ կապված, ինչպես նաև տնտեսության զարգացման համար հետաքրքրություն ներկայացնող, այդ թվում՝ միջգիտակարգային բնույթի այլ ուսումնասիրությունները:

բ) **Հետազոտական ուղղություն:** Հետազոտական ուղղությունը Կենտրոնում իրականացվող կիրառական և ակադեմիական հետազոտական աշխատանքներն են, որոնք իրականացվում են Կենտրոնի մասնագիտացման բնագավառում և կրում են պարբերական բնույթ: Հետազոտական ուղղությունները ենթակա են վերանայման՝ կախված հիմնախնդրի արդիականությունից և տնտեսության զարգացման համար դրա կարևորությունից:

գ) **Հետազոտական թեմա:** Մեկ կամ մի քանի հետազոտական ուղղությունների շրջանակներում սահմանված հիմնախնդիրը կամ դրանց որոշակի շրջանակն է, որոնց ուսումնասիրման և լուծման ուղիների առաջադրման նպատակով իրականացվելու է համապատասխան գիտահետազոտական, վերլուծական կամ մշակումների իրականացման աշխատանքը:

դ) **Հետազոտական թեմայի տեխնիկական առաջադրանք:** Հետազոտությամբ ակնկալվող արդյունքներին, հետազոտության ժամկետին, մեթոդաբանությանը, օբյեկտին, ընտրանքին, գործիքակազմին, հաշվետվողականությանը, հետազոտության հիմնական արդյունքները պարունակող հրապարակմանը (բովանդակությանը, ծավալին, կառուցվածքին և ձևավորմանը), դրա աշխատանքային լեզվին, հիմնական արդյունքները նկարագրող համառոտագրերին (բովանդակությանը, ծավալին, կառուցվածքին և ձևավորմանը), արդյունքների հրապարակայնացման (այդ թվում՝ ազդեցության գործակից ունեցող միջազգային գրախոսվող

պարբերականներում հրապարակման) եղանակներին և արդյունքների միջանկյալ և ամփոփիչ քննարկումներին, ինչպես նաև ակադեմիական բարեվարքությանը ներկայացվող պահանջներն են, որոնք սահմանվում են մրցույթի հրավերով և վերահսկվում են Կենտրոնի կողմից:

ե) **Դրամաշնորհի մրցույթ:** Որոշակի հետազոտական թեման սահմանված ժամկետներում և տեխնիկական առաջադրանքով իրականացնելու համար, մրցութային հիմունքներով իբրև կատարողներ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող) և ասպիրանտներին ու ուսանողներին ներգրավելու և ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով ներբուհական մրցույթի հրապարակային հայտարարման, դրամաշնորհ հայցող կատարողներից կազմված խմբերից հայտերի ընդունման, քննարկման և ըստ հաստատված չափանիշերին համապատասխանության հետազոտական թեմայի կատարողներ ընտրելու գործընթաց:

զ) **Հետազոտական խումբ:** Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող) և ասպիրանտներից ու ուսանողներից որոշակի համամասնությամբ կազմված կատարողների խումբ: Խմբում կարող են ընդգրկվել նաև Կենտրոնի աշխատակիցները՝ հասարակական հիմունքներով: Սույն կարգի իմաստով՝ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի անդամ են համարվում նաև Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի ներկայացուցիչները (այդ թվում՝ համատեղությամբ և ժամավճարով աշխատող) (այսուհետ՝ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմ (այդ թվում՝ համատեղությամբ և ժամավճարով աշխատող)):

Հետազոտական խումբը կարող է ձևավորվել նաև Կենտրոնի աշխատակազմի կողմից մրցութային հիմունքներով ուսանողների և ասպիրանտների ներգրավման եղանակով: Նման հետազոտական խմբի անդամները

բացառապես Համալսարանի ուսանողներ և ասպիրանտներ են, որոնց ընթացիկ հետազոտական թեման ղեկավարվում է Կենտրոնի աշխատակիցների կողմից:

Սույն կարգի իմաստով՝ «ասպիրանտ» հասկացությունը ներառում է նաև Համալսարանում գրանցված հայցորդներին (այսուհետ՝ ասպիրանտ), իսկ «ուսանող» հասկացությունը ներառում է Համալսարանի՝ ներառյալ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի մագիստրատուրայում և բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերում սովորող ուսանողներին (այսուհետ՝ ուսանող):

(3-րդ կետի «զ» ենթակետը լրաց. 05.03.2024 N 7 - 3)

II. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

4. Կենտրոնի հետազոտական թեմաները համարվում են դրա հետազոտական մասնագիտացման բաղադրիչներ և, ելնելով իրենց ոլորտային պատկանելությունից, կարող են ներառվել Կենտրոնի հետազոտական ուղղություններից որևէ մեկում:
5. Կենտրոնի հետազոտական թեմաներն ունեն կիրառական նշանակություն, իսկ դրանց իրականացմամբ ապահովված արդյունքները պետք է ունենան պոտենցիալ շահառուներ: Պոտենցիալ շահառուների շրջանակը որոշվում է՝ ելնելով նրանց կանոնադրական գործառույթներից, գործունեության նպատակներից և հիմնական խնդիրներից:
6. Հետազոտական թեմաները ձևավորվում են Կենտրոնի աշխատակազմի կողմից՝ արտաքին և ներքին շահառուների հետ խորհրդակցությունների կամ Կենտրոնի կողմից հետազոտական դրամաշնորհների և պատվերների ներգրավման արդյունքում:
7. Յուրաքանչյուր տարվա հետազոտական թեմաների տարեկան ծրագրի ձևավորման, բյուջեի և օրացուցային պլանի հստակեցման նպատակով Կենտրոնի աշխատակազմի կողմից իրականացվում են արտաքին և ներքին

շահառուների հետազոտական կարիքների վերհանման քննարկումներ, որոնց արդյունքների ամփոփմամբ ձևավորվում են առաջարկվող հետազոտական թեմաների ցանկը, դրանց արդիականության հիմնավորումները, կատարման ընթացքին, բովանդակությանը, հրապարակմանը, հանրայնացմանն առնչվող տեխնիկական առաջադրանքների նախագծերը և ներկայացվում Կենտրոնի Փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Փորձագիտական խորհուրդ) հաստատմանը: Հետազոտական թեմաների հաստատման հարցերով հրավիրված Փորձագիտական խորհրդի նիստերը հրապարակային են:

Արտաքին շահառուների հետ իրականացվող հետազոտական թեմաների հստակեցումը կատարվում է հետևյալ կառուցակարգով՝

- Համալսարանը դիմում է արտաքին շահառուներին՝ ներկայացնելով հետազոտությունների նախատեսվող ուղղությունները և խնդրելով առաջարկել նշված հետազոտական ուղղություններին համահունչ թեմաներ՝ իրենց նպատակների, խնդիրների և գործառույթների շրջանակներում,
- ներկայացված թեմաների շուրջ տեղի են ունենում երկկողմանի քննարկումներ արտաքին շահառուների հետ, այնուհետ՝ քննարկումների արդյունքում համաձայնեցված թեմաները ներկայացվում են Փորձագիտական խորհրդի հաստատմանը:

Արտաքին շահառուների հետ համագործակցության հարթակներ են հանդիսանում նաև երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերը, պայմանագրերն ու հուշագրերը, ինչպես նաև համատեղ կազմակերպված «Կլոր սեղաններն» ու աշխատաժողովները:

8. Փորձագիտական խորհրդի կողմից հաստատված հետազոտական թեմաները քննարկվում են Համալսարանի գիտական խորհրդին կից (այսուհետ՝ Գիտական խորհուրդ) գիտամեթոդական հանձնաժողովում և հաստատվում Գիտական խորհրդի կողմից:

9. Հետազոտական թեմաներն իրականացվում են՝ ըստ հաստատված տարեկան հետազոտությունների ծրագրի, բյուջեի և օրացուցային պլանի:
10. Կենտրոնի աշխատակազմը, Համալսարանի ներքին շահառուների հետազոտական կարիքների բավարարման կամ հանրային հետաքրքրություն ունեցող հիմնախնդիրների վերլուծության նպատակով, կարող է սեփական նախաձեռնությամբ, առանց Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու, իրականացնել հետազոտություններ, եթե դրանցում չի ներգրավելու հավելյալ կատարողների:
11. Կենտրոնի աշխատակազմը տարվա ընթացքում արտաքին դրամաշնորհներ շահելու կամ հետազոտական պատվերներ ստանալու դեպքում կարող է սեփական նախաձեռնությամբ ձևավորել հետազոտական թեմաներ և, ըստ անհրաժեշտության, ներգրավել հավելյալ կատարողներ՝ առանց Գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնելու:
12. Գիտական խորհրդին ներկայացվող հետազոտական թեմաների հիմնավորման պարտադիր բաղադրիչներ են սահմանվում՝
    - առաջարկվող հետազոտական թեմաների հրատապությունը,
    - դրանց անցկացման նպատակը և առաջադրվող խնդիրները,
    - հետազոտությամբ ակնկալվող գիտական և գործնական արդյունքները,
    - ակնկալվող արդյունքների կիրառման դաշտի մանրամասն նկարագիրը,
    - հետազոտության պոտենցիալ շահառուների թվարկումը,
    - հետազոտության արդյունքների շահառուների կարիքների բացահայտման նպատակով նրանց հետ իրականացված քննարկումների արդյունքները,
    - հետազոտության առաջարկվող տևողությունը և բյուջեի չափը,
    - հետազոտության արդյունքների ներբուհական և հանրային քննարկումների ժամանակացույցը,
    - հետազոտության արդյունքների հրապարակման ձևաչափը:

13. Հետազոտական թեմաները ձևավորվում են առավելագույնը մեկ տարի տևողությամբ և յուրաքանչյուր տարի ենթակա են փոփոխության:

III. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

14. Հետազոտական խմբերի ձևավորման նպատակներն են՝
   - Կենտրոնի մասնագիտացման բնագավառում հետազոտական հավելյալ ակտիվության և հրապարակումների պարբերականության ապահովումը,
   - Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող) ընթացիկ հետազոտություններում ներգրավելու ճանապարհով նրանց հետազոտական կարողությունների բարելավումը,
   - հետազոտական աշխատանքներում Համալսարանի ասպիրանտների և ուսանողների հետազոտական հմտությունների զարգացումը՝ նրանց հետազոտական աշխատանքներում ներգրավելու միջոցով,
   - հետազոտությունների արդյունքների ինտեգրումը ուսումնական գործընթացում,
   - կիրառական հետազոտությունների իրականացմամբ ՀՀ տնտեսության որևէ խնդրի (խնդիրների) լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը համապատասխան շահառուին (շահառուներին),
   - կիրառական հետազոտությունների արդյունքների հրապարակմամբ Համալսարանի՝ իբրև հետազոտական հաստատության, հեղինակության բարձրացումը:
15. Կենտրոնի հետազոտական խմբերը կենտրոնի տարեկան հետազոտական ծրագրում ներառված հետազոտական թեմաների իրականացման նպատակով մրցութային հիմունքներով Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող) և

ասպիրանտներից ու ուսանողներից ներգրավվող կատարողներից բաղկացած խմբերն են:

16. Կենտրոնի հետազոտական խմբերում կարող են ներառվել նաև Համալսարանի բակալավրիատի ավարտական կուրսում և (կամ) մագիստրատուրայում փորձառություն անցնող ուսանողները՝ նրանց փորձառության ժամկետներում և առանց վարձատրության:
17. Համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում, ինչպես նաև այլ՝ բացառիկ դեպքերում, ելնելով հետազոտական թեմայում մասնագիտական այլ ոլորտից մասնագետներ ներգրավելու անհրաժեշտությունից, հետազոտական խմբում կարող են ներգրավվել նաև Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչ (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող) չհանդիսացող անձինք:
18. Հետազոտական խմբերը ձևավորվում են տվյալ հետազոտական թեմայի կատարման համար և գործում են մինչև թեմայի սահմանված ժամկետի ավարտը, որից հետո, սույն կարգի համաձայն՝ նրանց աշխատանքի հանձնման-ընդունման ավարտական ակտի հաստատվելու պահից կատարողների և պատվիրատուի պայմանագրային պարտավորությունները դադարում են:
19. Կենտրոնի հետազոտական խմբերում ներգրավվելու չափանիշներն են՝
    - կատարողը պետք է լինի Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչ (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող),
    - բակալավրիատի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանող կատարողի կուտակային միջին որակավորման գնահատականը պետք է բարձր լինի 15.1 միավորից, իսկ մագիստրանտ կատարողներինը՝ 76 միավորից,
    - կատարողը պետք է ունենա գիտական աստիճան և վերջին 5 տարիների ընթացքում պետք է ունենա հետազոտության թեմայի խնդիրներին

առնչվող առնվազն 3 գիտական հրապարակում ազգային կամ միջազգային գրախոսվող գիտական պարբերականներում,

- գիտական աստիճանի բացակայության դեպքում կատարողը վերջին 5 տարիների ընթացքում պետք է ունենա հետազոտության թեմայի խնդիրներին առնչվող առնվազն 5 գիտական հրապարակում ազգային կամ միջազգային գրախոսվող գիտական պարբերականներում, բացառությամբ ասպիրանտ կամ ուսանող կատարողների,
- համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում, ինչպես նաև այլ՝ բացառիկ դեպքերում, ոչ Համալսարանից ներգրավվող կատարողը պետք է աշխատանքային փորձառություն ունենա այն մասնագիտական բնագավառում, որի խնդիրների ուսումնասիրման նպատակով հետազոտական խմբի ղեկավարի կողմից ներառվել է իբրև ժամանակավոր կատարող:

20. Հետազոտական թեմաներն իրականացնող խմբերը կազմավորվում են 2 սկզբունքով.

1) **Դրամաշնորհի մրցույթի մասնակցելու նպատակով ձևավորված խումբ:** Երբ հետազոտական խումբը ձևավորվել է Կենտրոնի հայտարարած դրամաշնորհի մրցույթին մասնակցելու համար: Նման հետազոտական խմբի անդամների առնվազն 30 տոկոսը Համալսարանի ասպիրանտներ և ուսանողներ են, իսկ մնացածը՝ Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ (այդ թվում՝ համատեղությամբ և ժամավճարով աշխատող):

2) **Կենտրոնի աշխատակազմի համակարգմամբ ձևավորված խումբ:** Երբ հետազոտական խումբը ձևավորվել է Կենտրոնի աշխատակազմի կողմից մրցութային հիմունքներով ուսանողների և ասպիրանտների ներգրավման եղանակով: Նման հետազոտական խմբի անդամները բացառապես Համալսարանի ասպիրանտներ և ուսանողներ են, որոնց ընթացիկ հետազոտական թեման ղեկավարվում է Կենտրոնի աշխատակիցների

կողմից: Կենտրոնի աշխատակիցները թեման ղեկավարում են առանց լրացուցիչ վարձատրության՝ հասարակական հիմունքներով:

21. Կենտրոնի աշխատակիցները, հասարակական հիմունքներով, կարող են ներառվել հետազոտական թեմաներ կատարող խմբերում, առանց հետազոտական աշխատանքների համար լրացուցիչ վարձատրության:
22. Կենտրոնի՝ դրամաշնորհի հիմունքներով ձևավորված հետազոտական թեմային մասնակցության հայտ ներկայացրած խմբերում ուսանողների և ասպիրանտների ներգրավումը կատարվում է հայտին մասնակցող խմբի ղեկավարի կողմից:
23. Կենտրոնի աշխատակազմի համակարգմամբ ձևավորված հետազոտական խմբերում ասպիրանտների և ուսանողների ներգրավումը կատարվում է աշխատակազմի կողմից՝ այդ նպատակով հայտարարված մրցույթի արդյունքներով:
24. Ուսանողի ներգրավման պայման են սույն կարգի 19-րդ կետով սահմանված առաջադիմության նվազագույն շեմը, առկա հմտությունները, մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը և հրապարակումները (եթե առկա են): Ասպիրանտ կատարողների համար ներգրավման պայման են առկա հմտությունները, մասնագիտական հետաքրքրությունների շրջանակը և հրապարակումները (եթե առկա են):
25. Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի հետազոտական թեմաներում ներգրավված Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը (այդ թվում՝ համատեղությամբ կամ ժամավճարով աշխատող), ասպիրանտներն ու ուսանողները չեն կարող միաժամանակ ներգրավված լինել Համալսարանի ֆինանսավորմամբ իրականացվող այլ հետազոտական թեմաներում և խմբերում:
26. Հետազոտական խմբի ղեկավարի և կատարողների գործառույթները, աշխատանքային պարտականությունները և իրավասությունները սահմանվում

են ծառայությունների մատուցման պայմանագրերով՝ մրցույթի հրավերում նշված տեխնիկական առաջադրանքին համապատասխան:

Ծառայությունների մատուցման պայմանագրում պարտադիր կերպով նշվում է ակադեմիական բարեվարքության չպահպանման և (կամ) պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար սույն կարգով նախատեսված պատժամիջոցների մասին:

III. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

27. Համալսարանի հետազոտական կարողությունների զարգացման և Կենտրոնի հետազոտությունների ֆինանսավորման տարեկան բյուջեն հաստատվում է՝ ելնելով Համալսարանի զարգացման ռազմավարության առաջնահերթություններից:
28. Կենտրոնի հետազոտական թեմաների ֆինանսավորումն իրականացվում է հետազոտությունների ֆինանսավորման նպատակով հատկացված տարեկան բյուջեից՝ նպատակային դրամաշնորհի տեսքով:
29. Հետազոտական թեմաների ֆինանսավորման չափը կախված է հետազոտության օբյեկտի ընդգրկման աստիճանից, հետազոտության ընթացքում դաշտային աշխատանքների իրականացման անհրաժեշտությունից (բացակայությունից), դաշտային աշխատանքների ընտրանքի մեծությունից, հետազոտության տևողությունից և ակնկալվող գիտագործնական արդյունքներից:
30. Հետազոտական թեմայի կատարման համար հատկացված բյուջեն հետազոտական թեմայի մասնակցության հայտ ներկայացրած խմբի ղեկավարի կողմից բաշխվում է հետևյալ սկզբունքով՝
    - խմբի անդամների աշխատանքի վարձատրություն,
    - գործուղումների և նյութերի ձեռքբերման ծախսեր,

- այլ ծախսեր:

Հետազոտական խումբը կամ նրա անդամը (անդամները) չի (չեն) կարող հոդվածների հրապարակման (հրապարակումների) համար Համալսարանից այլ փոխհատուցում ստանալ, եթե նախահաշվով սահմանված «այլ ծախսեր» հոդվածով փոխհատուցվել են հոդվածների հրապարակման համար ծախսերը:

31. Հետազոտական խմբի ղեկավարը իրավասու է ինքնուրույն որոշելու առանձին կատարողների աշխատանքի վարձատրության չափը՝ ըստ սույն կարգում սահմանված միջակայքերի:
32. Վարձատրության տարբերակման հիմքում կարող են դրվել՝
    - կատարողների գիտական աստիճանների տարբերությունները,
    - կատարվող աշխատանքի բարդությունը,
    - կատարողի բեռնվածությունը (լրիվ կամ կես հաստիքով):
33. Հետազոտական խմբի ղեկավարի ամսական վարձատրության միջակայք է սահմանվում 180.000 - 220.000 (մեկ հարյուր ութսուն հազարից երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամը (ներառյալ հարկերը և այլ վճարները):
34. Հետազոտական խմբում լրիվ հաստիքով և գիտական աստիճան ունեցող կատարողի ամսական վարձատրության միջակայք է սահմանվում 140.000 - 160.000 (մեկ հարյուր քառասուն հազարից մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը (ներառյալ հարկերը և այլ վճարները):
35. Հետազոտական խմբում լրիվ հաստիքով և գիտական աստիճան չունեցող կատարողի ամսական վարձատրության միջակայք է սահմանվում 90.000 - 120.000 (իննսուն հազարից մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամը (ներառյալ հարկերը և այլ վճարները):
36. Հետազոտական խմբում իբրև կատարող ներգրավված՝ բակալավրիատի ուսանողների անդամների համար ամսական վարձատրության չափը սահմանվում է 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ վճարները), մագիստրանտների համար՝ 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ

դրամ (ներառյալ հարկերը և այլ վճարները), ասպիրանտների համար՝ ամսական 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և այլ վճարները):

Սույն կետում նշված վարձատրության չափերը գործում են նաև Կենտրոնի համակարգմամբ ձևավորված հետազոտական խմբերի ֆինանսավորման դեպքում:

37. Հետազոտական խմբի ղեկավարի և ներգրավված կատարողների աշխատանքի վարձատրությունը կատարվում է ըստ նրանց հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրում նշված վարձատրության չափի և պարբերականության՝ հաստատված կատարողական ակտի հիման վրա:

Կատարողական ակտի հետ միասին ներկայացվում են նաև տվյալ ժամանակահատվածում իրականացված հետազոտությունների արդյունքները:

Առանց հետազոտության արդյունքների ներկայացված կատարողական ակտերը հաստատման ենթակա չեն:

Հետազոտական խմբի ղեկավարի զեկուցագրի հիման վրա Կատարողի նկատմամբ կարող են կիրառվել ծառայությունների մատուցման պայմանագրով և օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցները:

Առանց պատասխանատվության միջոցների կիրառման, սույն կարգին համապատասխան ստեղծված հետազոտական խմբից անդամի դուրս գալու նպատակով հետազոտական խմբի ղեկավարի զեկուցագրի հիման վրա լուծվում է ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ խմբի անդամին վճարելով համապատասխան վերջնահաշվարկ: Հետազոտական խմբի ղեկավարի դուրս գալու դեպքում զեկուցագիրը ներկայացնում է Կենտրոնի տնօրենը:

Հետազոտական խմբի ղեկավարի թափուր տեղը կարող է լրացվել խմբի այլ անդամով, առանց լրացուցիչ վարձատրության: Հետազոտական խմբի

անդամի թափուր տեղը կարող է լրացվել հետազոտական խմբի անդամ չհանդիսացող անձով, առանց վարձատրության:

Հետազոտական խմբի ձևավորումից և կատարողների հետ համապատասխան պայմանագրեր կնքելուց հետո, սույն կարգի 19-րդ կետի համաձայն՝ հետազոտական խմբի անդամության չափանիշներին այլևս չհամապատասխանելու (կարգավիճակը կորցնելու) դեպքում ծառայությունների մատուցման պայմանագիրը շարունակում է գործել մինչև պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը:

38. Կենտրոնը 15 օրվա ընթացքում դիտարկում է ներկայացված հաշվետվություններն ու հրապարակման ներկայացրած նյութերը և բացթողումների կամ տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջներից շեղումների դեպքում խմբին տալիս է բացթողումները և շեղումները շտկելու ժամկետ, որը չի կարող գերազանցել 20 աշխատանքային օրը: Կատարողական ակտերը ստորագրվում են և պայմանագրով սահմանված վարձատրության ընդհանուր գումարի վերջին 15 տոկոսը վճարվում է բացթողումներն ու շեղումները շտկելուց հետո:

Ավարտական հաշվետվությունը հաստատվում է Փորձագիտական խորհրդի կողմից:

39. Գործուղումների, նյութերի ձեռքբերման, ինչպես նաև հայտում նշված այլ ծախսերի համար նախատեսված հատկացումները կատարվում են Կենտրոնի տնօրենի զեկուցագրի և ծախսերը հիմնավորող անհրաժեշտ հաշվապահական փաստաթղթերի առկայության դեպքում՝ հետազոտության համար նախատեսված գումարի շրջանակներում:

Գործուղման ծախսերի հատուցումն իրականացվում է օրենսդրությանը համապատասխան:

IV. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՀԱՅՏԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄԸ

40. Դրամաշնորհի հիմունքներով հետազոտական թեմաների կատարման մրցույթը կազմակերպվում է Կենտրոնի կողմից՝ համապատասխան մրցույթի հրավերի հրապարակման եղանակով:
41. Մրցույթի հրավերը ներառում է մրցույթի պայմանների նկարագիրը, հայտի ձևավորման տեխնիկական պայմանների (կառուցվածք, ձևաչափ, տառատեսակ, աշխատանքային լեզու) նկարագիրը, հետազոտական թեմայի տեխնիկական առաջադրանքը, հետազոտության ժամկետներին, հրապարակումների ժամանակացույցին, ձևաչափին, աշխատանքային լեզվին, ակնկալվող արդյունքներին և հետազոտության արտաքին շահառուներին վերաբերող տեղեկատվությունը:
42. Հետազոտողների խմբերից մրցույթին մասնակցելու հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվում հայտարարության հրապարակումից հետո 15-30 օրը՝ կախված հետազոտական թեմայի բարդությունից, ուսումնասիրվածության և ընդգրկման աստիճանից, ինչպես նաև ծավալից: Մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետն ամրագրվում է մրցույթի հրավերում:
43. Դրամաշնորհի հիմունքներով հետազոտական թեմայի կատարման մրցույթին կարող են հայտ ներկայացնել մեկից ավելի հետազոտական խմբեր, որոնք ունեն իրենց կողմից ընտրված ղեկավար և սույն կարգի 15-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 20-րդ, 25-րդ և 26-րդ կետերով սահմանված պահանջներին բավարարող կազմ, ինչպես նաև 20-րդ կետով սահմանված ուսանող-ասպիրանտ-պրոֆեսորադասախոսական կազմ համամասնություն:
44. Մրցույթին հայտ ներկայացնող խումբը մրցույթի հրավերով սահմանված ժամկետներում լրացնում և տպագիր ու էլեկտրոնային եղանակով Կենտրոնին

է փոխանցում սույն կարգին կից N 1 հավելվածով սահմանված փաստաթղթերը և մրցույթին մասնակցելու հայտը:

45. Հետազոտական թեմայի կատարման նպատակով հետազոտական խմբերի ընտրությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ սույն կարգով սահմանված և հետազոտական խմբի (խմբերի) կողմից Կենտրոն ներկայացված փաստաթղթերի փաթեթների փորձաքննության արդյունքում:

46. Հայտերը դիտարկվում են և մրցույթի արդյունքում հայտը շահած խմբի տվյալները հրապարակվում են հայտերի ընդունման վերջնաժամկետին հաջորդող 15 աշխատանքային օրերի ընթացքում:

47. Հայտերի դիտարկման ընթացքում Կենտրոնի կողմից ներգրավվում են 3 փորձագետներ, որոնցից 1-ը՝ Կենտրոնի աշխատակազմի ներկայացուցիչ, 2-ը՝ արտաքին: Ընդ որում, արտաքին փորձագետների կողմից փորձաքննությունն իրականացվում է վճարովի հիմունքներով՝ ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելու միջոցով:

48. Մրցույթի պայմաններին բավարարող հայտերը տրամադրվում են ներգրավված փորձագետներին՝ սույն կարգի 53-րդ և 54-րդ կետերով սահմանված չափանիշներին և ձևաչափին համապատասխան գնահատում իրականացնելու համար:

49. Փորձագիտական կարծիքի ներկայացվող հայտերն արտաքին փորձագետներին ներկայացվում են ծածկագրի հերթական համարով, առանց հետազոտական խմբի ղեկավարի և կատարողների տվյալների:

50. Հայտերի փորձաքննության ժամանակ դրանք փորձագետների կողմից գնահավում են ըստ սույն կարգի N 2 հավելվածով սահմանված 10 չափանիշների:

51. Խմբի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորումը գնահատվում է միայն Կենտրոնի աշխատակազմի ներկայացուցչի կողմից, որը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի մինչև 1/3-ը:

52. Փորձաքննությունը կազմակերպող և իրականացնող անձանց կողմից հայտերի բովանդակության, փորձաքննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը երրորդ կողմին արգելվում է:

53. Հայտի փորձաքննություն իրականացնող մասնագետը հայտի գնահատումն իրականացնում է ըստ սույն կարգի N 2 հավելվածով սահմանված գնահատման թերթիկի, որտեղ նշված 10 չափանիշներից յուրաքանչյուրին տրվում է 0-5 միջակայքում գնահատական (1,0 միավորի ճշտությամբ), որտեղ 0-ն՝ նվազագույն և 5-ը՝ առավելագույն միավորներն են:

54. Հայտի փորձաքննության ընթացքում Կենտրոնի աշխատակազմից ներգրավված և արտաքին փորձագետների կողմից 0-5 միջակայքում միավորները տրվում են հետևյալ մեթոդաբանությամբ՝

0 միավոր	հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկության բացակայության պատճառով,
1 միավոր	հարցի պատասխանը ներկայացված է մակերեսորեն և անորոշ,
2 միավոր	հարցի պատասխանը բավարար չէ ամբողջական կարծիք կազմելու համար,
3 միավոր	հարցի պատասխանն, ընդհանուր առմամբ, բավարարում է հարցի պահանջներին, բայց կան զգալի անհամապատասխանություններ,
4 միավոր	հարցի պատասխանը որոշակի վերապահումներով համապատասխանում է առաջադրված պահանջներին, սակայն առկա են որոշակի անհամապատասխանություններ,
5 միավոր	հարցի պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:

55. Հայտի փորձաքննության վերջնական գնահատականը ձևավորվում է երեք փորձագիտական գնահատականների միջին թվաբանականի հիման վրա:
56. Այն դեպքերում, երբ երեք փորձագետներից երկուսի գնահատականները գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50 տոկոս և ավելի չափով տարբերվում են, փորձաքննության վերջնական գնահատականը ձևավորվում է երեք փորձագետներից երկուսի՝ իրար մոտ գնահատականների միջին թվաբանականի հիման վրա:
57. Փորձաքննության արդյունքները հաստատվում են Փորձագիտական խորհրդի կողմից, հատուկ արձանագրությամբ, որը ներառում է մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած խմբերի վարկանիշային ցանկը (ըստ հայտատուների ծածկագրերի) և յուրաքանչյուր հետազոտական թեմայի կատարման համար առավելագույն միավոր ստացած խմբի ծածկագիրը:
58. Եթե վերջնական փորձագիտական գնահատականը փոքր է գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50 տոկոսից, ապա հայտը մերժվում է:
59. Միևնույն հետազոտական թեմայի համար հայտ ներկայացրած մեկից ավելի խմբերի դեպքում նախապատվությունը տրվում է փորձաքննության արդյունքներով առավելագույն միավոր ստացած խմբին: Հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է արտաքին փորձագետների կողմից ավելի բարձր միավորներ ստացած խմբին:
Փորձագիտական խորհրդի անդամը, ով ընդգրկված է նաև խմբում, տվյալ հայտի քվեարկությանը մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:
60. Փորձագիտական խորհրդի կողմից հաստատված՝ հայտերի փորձաքննության արձանագրությունը Փորձագիտական խորհրդի նախագահը ներկայացնում է Համալսարանի ռեկտորին:
61. Համալսարանի ռեկտորը, ելնելով փորձաքննության արդյունքներից, որոշում է ֆինանսավորման ենթակա հետազոտական խմբերին, հաստատում է իրականացման ենթակա հետազոտական թեմաների ցանկը, դրանց

ղեկավարների և կատարողների ցուցակը՝ նշելով յուրաքանչյուր գիտական թեմայի կատարման համար նախատեսվող գումարի հատկացման չափը:

62. Փորձաքննության արդյունքում հաղթած հետազոտական խմբերի ղեկավարների և կատարողների հետ կնքվում են ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրեր, որոնք գործում են մինչև հետազոտական թեմայի ժամկետի ավարտը:

63. Պայմանագրերում խմբի ղեկավարի և կատարողների գործառույթները սահմանվում են սույն կարգի 26-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան:

64. Պայմանագրերում խմբի ղեկավարի և կատարողների աշխատանքի վարձատրությունը և պարբերականությունը սահմանվում են սույն կարգի 32-38-րդ կետերով սահմանված պայմաններին համապատասխան՝ ըստ հայտում ներկայացված հաստիքացուցակի:

V. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

65. Հետազոտական թեմաների կատարումը պարտադիր է Կենտրոնի կողմից հրապարակված մրցույթի հրավերով և խմբի ներկայացրած հայտով սահմանված ժամկետներում:

66. Հետազոտական թեմաների կատարումը պարտադիր է մրցույթի հրավերով սահմանված տեխնիկական առաջադրանքի պայմաններին և արդյունքների հրապարակայնացման ժամանակացույցին ու սահմանված ձևաչափին համապատասխան:

67. Հետազոտական թեմաների կատարմամբ պարտադիր պետք է ապահովվեն մրցույթի հրավերով սահմանված ակնկալվող արդյունքները, ինչպես նաև մրցույթի հայտում խմբի կողմից ներկայացված հավելյալ արդյունքները:

68. Սահմանված ժամկետի ավարտին հետազոտական խումբը Կենտրոնին է ներկայացնում իրականացված հետազոտության հաշվետվությունը, հետազոտությամբ ապահովված արդյունքները ներառող հրապարակման ենթակա նյութերը (ներառյալ հետազոտության արդյունքներն արտացոլող հրապարակման ներկայացված նյութի ծավալի 1/4-ը կազմող անգլերենով և ռուսերենով համառոտագրերը):
69. Սահմանված ժամկետներում ավարտին չհասցված, կամ մրցույթի հրավերով սահմանված պարտադիր նվազագույն արդյունքները չապահոված հետազոտական խումբը վճարում է տուժանք, դրամաշնորհի հայտով հայցված ընդհանուր գումարի 25 տոկոսի չափով:
70. Սահմանված ժամկետներում ավարտին չհասցված, կամ մրցույթի հրավերով սահմանված պարտադիր նվազագույն արդյունքները չապահոված հետազոտական խմբերի անդամները զրկվում են հաջորդող երկու հաշվետու տարիների ընթացքում Համալսարանի ֆինանսավորմամբ որևէ հետազոտական ծրագրի մասնակցելու իրավունքից:
71. Բացառիկ դեպքերում, երբ առաջացել է հետազոտական թեմայի կատարման ժամկետի երկարաձգման անհրաժեշտություն (կապված նոր իրողությունների ի հայտ գալու և դրանցով պայմանավորված՝ նոր առաջարկների փաթեթներ ու դրանց կատարման մեթոդական երաշխավորություններ մշակելու անհրաժեշտության հետ), հետազոտական խմբի ղեկավարի զեկուցագրի հիման վրա Փորձագիտական խորհուրդը կարող է երկարաձգել թեմայի կատարումը ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով, առանց լրացուցիչ վարձատրության:
72. Կենտրոնի հետազոտական ծրագրերում ներառված հետազոտական թեմաների համակարգումը և ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է Կենտրոնի աշխատակազմից խմբին կցված համակարգողի կողմից:
73. Հետազոտական թեմաների ընթացիկ վերահսկողության բաղադրիչներ են՝

- հետազոտական խմբի ղեկավարի կողմից հաստատված հետազոտության ընթացքի և ապահովված փաստացի արդյունքների վերաբերյալ միջանկյալ և ամփոփ հաշվետվությունների ժամանակացույցները,
- հետազոտական խմբի ղեկավարի կողմից հաստատված հետազոտական արդյունքների ներհամալսարանական և հանրային քննարկումների կազմակերպման ժամանակացույցները,
- մրցույթի տեխնիկական առաջադրանքով սահմանված այլ գործողությունների (վերլուծական ակնարկների, գիտական հոդվածների և այլ նյութերի հրապարակում) համար սահմանված ժամանակացույցները և փաստացի արդյունքները,
- խմբի ղեկավարի կողմից թեմայի կատարողներին վերապահված աշխատանքների կատարման հաշվետվությունը,
- աշխատանքի վարձատրությունից բացի, հետազոտության նախահաշվով նախատեսված այլ ֆինանսական ծախսերի փաստաթղթային հիմնավորումները,
- հետազոտության տեխնիկական առաջադրանքով սահմանված վերջնական հրապարակման ներկայացվող հիմնական արդյունքները ներառող հաշվետվությունը և դրա երկլեզու համառոտագրերը:

74. Կենտրոնի տնօրենը հետազոտական ծրագրերի կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ տարեկան մեկ անգամ զեկուցում է Գիտական խորհրդին:

75. Հետազոտական աշխատանքները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև պայմանագրով նախատեսված ժամկետներում չկատարելու դեպքում հետազոտական խմբի անդամները կրում են պատասխանատվություն օրենսդրությանը համապատասխան:

(կարգը հաստ. 18.12.2019 N 1, փոխ. լրաց. և նոր խմբ. հաստ. 02.03.2021 N 8-3, լրաց. 05.03.2024 N 7-3)

Հավելված N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Հայտը հանձնված է «_____» _____ 20 ____ թ.

Ծածկագիր՝ _____

(լրացվում է հանձման ժամանակ)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Հայտի վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերեն)	_____
Հուշող (բանալի) բառեր (հայերեն)	_____
Հայտի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը	_____
Ծննդյան տարեթիվը	_____
Գիտական աստիճանը	_____
Պաշտոնը	_____
Հեռախոսը	_____
Էլեկտրոնային հասցեն	_____
Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը	_____
Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը	_____
Աշխատանքի վարձատրության (ներառյալ հարկերը) գումարը	_____ **հազար դրամ**
Վերադիր ծախսերի գումարը	_____ **հազար դրամ**
Հայցվող ընդհանուր գումարը	_____ **հազար դրամ**
Հայտի ղեկավարի ստորագրությունը	_____
ՀՊՏՀ «Ամբերդ» հ/կ տնօրենի ստորագրությունը	

«_____» _____ 20 ____ թ.

I. **ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ (1- 2 էջ)**

II. **ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (6-8 էջ)**

III. **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

(Հայտում պարտադիր է մանրամասնել հետազոտության ուղղությունները և վերլուծության ենթակա ցուցանիշների համախումբը, տեղեկատվության հավաքագրման, մշակման, կանխատեսումների և որոշումների կայացման համար անհրաժեշտ գործիքների համախումբը):

IV. **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՄԲ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (1-2 էջ)**

V. **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ**

(Ներկայացվում է հետազոտության փուլերի նկարագիրը, յուրաքանչյուր փուլի ակնկալվող արդյունքները և կատարման ժամկետը):

	Հետազոտության ընթացիկ և ավարտական փուլերում կատարվող աշխատանքների նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Կատարման ժամկետը
1 փուլ			
2 փուլ			
3 փուլ			
… փուլ			
Ավարտական հաշվետվություն			

I. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

N	Պաշտոնի անվանում	Աշխատավարձ և սոցիալական ապահովության վճարներ (հազար դրամ)	Հաստիքների քանակ	Ընդհանուր աշխատավարձ (հազար դրամ)

1.				
2.				
3.				
…				

II. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

N	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալները (հազար դրամ)
1.	Աշխատավարձ և սոցիալական ապահովության վճարներ	
2.	Նյութեր և միջոցներ	
3.	Գործուղումներ	
4.	Այլ ծախսեր	
	Ընդամենը	

Հետազոտական թեմայի ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) **(Ա.Ա.Հ.)**

«_____» _____ 20 ____ թ.

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Ազգանուն, անուն, հայրանուն _____

2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը _____

3. Կրթությունը (բուհը, մասնագիտությունը) _____

   _____

4. Գիտական աստիճանը _____

5. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը _____

Հրատարակված է

- գիտական հոդվածներ (թիվը)
- մենագրություններ (թիվը)
- արտոնագրեր (թիվը)

6. Վերջին հինգ տարիներին հետազոտության թեմային առնչվող հրապարակումների վերնագիրը, ամսագիրը, տարեթիվը, էջերը

   1.

   2.

   3.

   ավելացնել՝ ըստ անհրաժեշտության _____

7. Ստացված դրամաշնորհները _____

Ղեկավարի ստորագրությունը _____

«_____» _____ 20 ____ թ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ[1]

Ազգանուն, անուն, հայրանուն	
Ծննդյան տարեթիվը և ծննդավայրը	
Կրթությունը (բուհը, մասնագիտությունը)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը	
Աշխատանքի վայրը և պաշտոնը	
Հեռախոսը (աշխատանքի, տան, բջջային)	
Էլեկտրոնային հասցեն	
Նշել հետազոտության թեմային առնչվող վերջին 5 տարիների հրապարակումների վերնագիրը, ամսագիրը, տարեթիվը, էջերը	
1. 2. 3. 4.	

Կատարողի ստորագրությունը _____

Ղեկավարի ստորագրությունը _____

«_____» _____ 20 ____ թ.

[1] Լրացվում է յուրաքանչյուր կատարողի համար

Հավելված N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

N	**Գնահատման չափանիշները**	**Գնահատականը, միավոր**
1.	Հետազոտության հիմնախնդրի դրվածքի և օբյեկտի նկարագիրը	
2.	Հետազոտության ընտրված մեթոդաբանությունը և գործիքակազմը	
3.	Արդյունքների գործնական կիրառելիությունը	
4.	Ուսումնական գործընթացում արդյունքների ինտեգրման հնարավորությունը	
5.	Տվյալ բնագավառում խմբի ղեկավարի գիտական ձեռքբերումները*	
6.	Տվյալ բնագավառում կատարողների գիտական ձեռքբերումները*	
7.	Խմբի ղեկավարի մասնագիտական որակավորման համապատասխանությունը թեմային*	
8.	Խմբի կատարողների մասնագիտական որակավորման համապատասխանությունը թեմային*	
9.	Հայտի համապատասխանությունը մրցույթի պահանջներին	
10.	Նախահաշվի հիմնավորվածությունը	
	Ընդամենը	

*Գնահատվում է բացառապես ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակազմից ներգրավված փորձագետների կողմից: